
**ԱՆԾԱՆՈԹ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ՖՐՈՆՏԻՐ) ՈՐՊԵՏ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

ՂԱԶԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մարդկության պատմության ողջ ընթացքում էթնիկական խմբերը շփվել և փոխհարաբերվել են երկխոսությունների միջոցով: Օտար, անծանոթ մշակույթին առնչվելը մշակութային էվոլյուցիայի անբաժանելի մասն է: Սեփական բնօրրանից հեռանալը մարդու առջև դնում է օտարի հետ հանդիպման յուրահատուկ խնդիր: Բանն այն է, որ օտարի տարածությունը սովյալ մարդու համար դառնում է ինքնադրսևորման ու ինքնիրացման բոլորովին նոր տարածք, որը պետք է յուրացնի, և որտեղ նա ազատված է սեփական մշակութային «կապանքներից»: Հենց այդ տարածությունն ամերիկյան տեսաբանները բնութագրեցին որպես ճակատային տարածություն՝ ֆրոնտիթ, իսկ Ֆ. Թյուրնթերն այն համարեց ամերիկյան հողերի յուրացման ալիքի արտաքին եզր՝ վայրիության ու քաղաքակրթության շփման տարածություն¹:

Ֆրոնտիթը հասկացությունը դուրս է եկել իր նախնական նշանակության սահմաններից և այժմ գործածվում է սոցիալ-մշակութային ուսումնասիրությունների առաջատար ոլորտներում: Ամերիկյան հետազոտողների կարծիքով՝ արևելքից եկած (Նոր Անգլիա) ներգաղթյալները ամերիկյան տարածքներ բերեցին իրենց ավանդույթները, սովորույթները, օրենքները, որոնք, սակայն, «վայրի» Արևմուտքի պայմաններին չէին համապատասխանում և շուտով փոխարինվեցին ավելի պարզ, բայց կիրառելի ձևերով, ինչն էլ վերջո՝ հսկայական ազդեցություն ունեցավ ամերիկյան ժողովրդավարության ձևավորման վրա: Այնուհետև ֆրոնտիթային տեսության կանխադրույթները և մեթոդաբանական մոտեցումները հետազոտողները տարածեցին այլ երկրների պատմական տարբեր շրջանների վրա: Մի կողմից դա վերջ դրեց «ամերիկյան բացառիկության» գաղափարին, մյուս կողմից ընդլայնեց այս մեթոդաբանությունը այլ ֆրոնտիթների նկատմամբ կիրառելու հնարավորությունը: Ֆրոնտիթի՝ որպես տեսական հայեցակարգի կամ որպես ամերիկյան ողջ մշակույթը ներառող ազգային այլաբանության մասին խոսելիս հարկ է հիշել, որ Ամերիկայի պատմության մեջ ֆրոնտիթը նախ և առաջ պատմական, աշխարհագրական և տնտեսական իրական ֆենոմեն էր: Դա նոր տարածքների յուրացման մի առանձնահատուկ գործընթաց էր, որի արդյունքում ձևավորվեցին մշակութային

¹ Sté u **Тернер Ф.** Фронтитр в американской истории, М., «Весь мир», 2009, էջ 11:

խառնուրդներ՝ հիբրիդներ:

Ֆրոնտիրի՝ որպես տեսական և մեթոդաբանական կառույցի վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ ոչ միայն նոր տարածքների յուրացումը, այլև այդտեղ ծավալվող մշակութային գործընթացները, որոնք մշտապես փոխակերպվում են՝ ձեռք բերելով նոր ձևեր: Մա առաջին հերթին բնորոշ է ԱՄՆ-ի պատմությանը և մշակույթին, սակայն նույն վստահությամբ կարելի է տարածել նաև Կանադայի, Ավստրալիայի, Չինաստանի, Լատինական Ամերիկայի և շատ այլ երկրների պատմամշակութային գործընթացների վրա: Իսկ ժամանակակից գլոբալ գործընթացների համատեքստում այն կիրառելի է միջմշակութային ցանկացած փոխազդեցության պարագայում, քանի որ ֆրոնտիր կարելի է համարել այն տարածությունը, որտեղ տեղի են ունենում այդ փոխազդեցությունները: Այն ընկած է մշակույթների խաչմերուկներում՝ միաժամանակ մշակույթի սահմաններից և ներս, և դուրս:

Լեզվաբանական տեսանկյունից «ֆրոնտիր» նշանակում է «սահման», «ճակատային գիծ», «առաջնագիծ»: Սոցիալական տեսությունների շրջանակներում այն դիտարկվում է որպես «սահմանային տարածություն», «փոխակերպումների տարածություն», «մշակութային փոխազդեցությունների վայր», այն է՝ մշակույթների խառնարան: Սոցիոմշակութային առումով ֆրոնտիրը մի տարածք է, որտեղ ձևավորվում են նոր հանրույթ և նոր հասարակություն. դա տեղի է ունենում ֆրոնտիրում ապրող յուրահատուկ մշակույթի տեր բոլոր ժողովուրդների ու ազգությունների փոխազդեցության ու միմյանց հարմարման շնորհիվ²:

Ֆրոնտիրի էությունը հասկանալու համար հարկ է անդրադառնալ ֆրանսիացի հետստրուկտուրալիստ Մ. Ֆուկոյին: Թեև Ֆուկոն անմիջականորեն չի անդրադարձել «ֆրոնտիր» հասկացությանը, այնուամենայնիվ «ստանդատ, նորմալ» տարածություններից տարբերվող այլ հատուկ տիպի տարածությունների գոյության նրա գաղափարն արժանի է ուշադրության և կարող է օգնել ֆրոնտիրի էությունն առավել խորն ըմբռնելու հարցում:

Մարդու կյանքը հոսում է ժամանակի և տարածության մեջ, որոնք աշխարհի պատկերը ձևավորող հիմնասյուներից են: Մարդն անընդհատ համադրում է դրանք աշխարհընկալման այլ տարրերի հետ, կառուցարկելով դրանք՝ աստիճանակարգում է սեփական քրոնոտոպի մասերը, վերագրում է դրանց արժեքաբանական որոշակի բնութագրիչներ և այլն: Մարդն ինքնին որոշակի տարածություն է, նա շարունակվում է, անընդհատ զգում է իրեն տարածությունում, վերածվում է մարմնական այլաբանության, որի շնորհիվ գիտակցում և իմաստավորում է շրջապատող տարածությունը: Նա մի ինչ-որ տարածական դերակատար է, որն ինքնադրսևորվում է (ֆիզիկապես և գաղափարա-

² Sté u **Панарина С.** Граница и фронтир как фактор развития региона и/или страны // История и современность, 2015, № 1(21), էջ 22:

պես) որոշակի տարածությունում և փոխազդում է այդ միջավայրի հետ, ինչի արդյունքում դրանք անընդհատ վերաձևավորում են մեկը մյուսին:

Տարածությունը կարող է բնութագրվել հարաբերությունների համախմբով, որոնց համաձայն՝ ցանկացած օբյեկտ-տարածություն կարող է որոշվել միջավայր-տարածությունում: Գոյություն ունեն հարաբերությունների համակարգով որոշված բազմազան տարածություններ՝ փոխադրամիջոցներ, փողոցներ, քաղաքներ, ժամանցի վայրեր՝ սրճարան, թատրոն, կինոթատրոն, հանգստի վայրեր՝ տներ, ննջարաններ և այլն: Սակայն այս բոլորից առավել հետաքրքրական են նրանք, որոնք մեկը մյուսի հետ բավականին առանձնահատուկ հարաբերություններ ունեն: Դրանք այն վայրերն են, որոնք չեզոքացնում, աղավաղում կամ գլխիվայր շրջում են գոյություն ունեցող հարաբերությունները: Այդտեղ շրջվում են աջը և ձախը, վերևը և ներքևը, ճիշտը և սխալը, բարին և չարը, սովորականն ու անսովորը: Տվյալ տարածությունները կապված են մնացած բոլոր տարածությունների հետ և միևնույն ժամանակ հակադրվում են դրանց: Ըստ Ֆուկոյի՝ այդպիսի տարածությունները պայմանականորեն բաժանվում են երկու տեսակի: Առաջինը կարելի է անվանել «ուտոպիա»: Դրանք վայրեր են, որոնք տարածության հետ իրական կապ չունեն, կառուցվում են սոցիումի՝ գոյություն ունեցող համակարգի նկատմամբ ուղիղ կամ հակառակ նմանաբանություններով: Դրանք «իդեալական» տարածություններ են, որոնցում կառուցարկվում են «իդեալական» հասարակություններ³:

Բոլոր մշակույթներում, ուտոպիաներից բացի, կան իրական վայրեր՝ տարածության հետ իրական կապերով, սոցիալական որոշակի ինստիտուտներում ներառված, որոնք կոնտրտարածություններ են՝ ուտոպիայի ինքնատիպ մարմնավորումներ, որտեղ այդ հասարակությունում գոյություն ունեցող տարածությունների բոլոր տեսակները միաձուլված են, բայց միևնույն ժամանակ վիճարկված և շրջված են: Այստեղ չկան ավանդական կապեր և հարաբերություններ: Դրանց հատուկ են նոր օրենքներով ստեղծվող նոր կապերը, որոնք տարբերվում են ավանդականից ու սովորականից: Նման վայրերը մնացածների սահմաններից այն կողմ են, եթե նույնիսկ հնարավոր է լինում որոշել դրանց իրական ֆիզիկական-աշխարհագրական տեղը: Եվ քանի որ դրանք խստորեն տարբերվում են տարածությունների մնացած բոլոր տեսակներից, Ֆուկոն իր «Այլ տարածություններ» աշխատությունում դրանք անվանում է «հետերոտոպիաներ»: Ինչպես հետերոտոպիաները, այնպես էլ ուտոպիաները հիշեցնում են հայելիներ: Հայելին «տարածքի» տեսանկյունից ուտոպիա է, քանի որ այն մի ինքնատիպ «վայր է առանց վայրի», որտեղ մարդն իրեն տեսնում է մի տեղում, որտեղ չկա: Ելնելով հայելու տվյալներից՝ մարդը բացահայտում է, որ բացա-

³ St' u **Фуко М.** Другие пространства // Интеллектуалы и власть: Избранные политические статьи, выступления и интервью. М., «Праксис», 2006, ч. 3, էջ 194:

կայում է այնտեղից, որտեղ գտնվում է, որովհետև տեսնում է իրեն հայելու մեջ: Այդ ընկալումից դուրս գալով՝ նա վերադառնում է վիրտուալ տարածությունից այնտեղ, որտեղ գտնվում է և սկսում է վերականգնել իրեն: Բացի այդ, դա ոչ թե իրական, այլ արտացոլված, պայմանական, ավանդական բնութագրերից զուրկ տարածություն է⁴:

Աշխարհում ցանկացած մշակույթ կառուցում է հետերոտոպիաներ: Մակայն գոյություն ունեն հետերոտոպային տարածության տարբեր ձևեր: Ֆուկոն բոլոր հետերոտոպիաները բաժանում է երկու տեսակի: Ըստ նրա՝ այսպես կոչված «նախնադարյան» հասարակություններում գոյություն ունեն հետերոտոպիաներ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «ճգնաժամային հետերոտոպիաներ»: Դրա տակ պետք է հասկանալ սուրբ կամ արգելված բոլոր հնարավոր վայրերը, որոնք հասանելի են հասարակության հատուկ խմբերին, որոնք հենց իրենք կարող են լինել «ճգնաժամային», կամ այլ կերպ ասած՝ սահմանային վիճակում: Մակայն ժամանակակից հասարակություններում այդ տիպի հետերոտոպիաները ոչնչանում են: Ճգնաժամային հետերոտոպիաները փոխարինվում են շեղված հետերոտոպիաներով, այսինքն՝ այնպիսի տարածություններով, որտեղ տեղավորվում են նրանք, որոնց վարքը տարբերվում է ընդունված նորմերից և օրենքներից: Որպես օրինակներ կարելի է դիտարկել բանտերը, հիվանդանոցները, ծերանոցները: Ի դեպ, վերջին խումբը համապատասխանում է ինչպես ճգնաժամային, այնպես էլ շեղված հետերոտոպիաներին. ծերությունը մի կողմից ճգնաժամ է, մյուս կողմից էլ դրանում առկա է շեղված վարքի տարր, որովհետև այն հասարակությունում, որտեղ համընդհանուր զբաղվածությունն օրենք է, չաշխատող մարդիկ հայտնվում են շեղվածների խմբում⁵:

Հետերոտոպիաների կարևոր հատկանիշներից մեկը գործառությանի բազմազանությունն է: Հասարակությունները, ինչպես ցույց է տալիս պատմությունը, կարող են սահմանել հետերոտոպային տարածությունների գործառույթների բավականին լայն շրջանակ: Եվ թեև այդպիսի տարածության գործառությանի առանձնահատկությունները խիստ պատճառավորված են յուրաքանչյուր հասարակության մշակույթով, այնուամենայնիվ դրանք կարող են տատանվել, ինչը պայմանավորված է մշակութային միջավայրի փոփոխմամբ:

Հետերոտոպիաների ևս մեկ կարևոր հատկություն կարելի է դիտարկել, այն է՝ անհամատեղելի թվացող մի քանի տարածությունների միախառնումը որևէ իրական վայրում: Այս իմաստով Ֆուկոն հետերոտոպիաները համեմատում է թատրոնի հետ, քանի որ բեմում ներկայացվում է միմյանցից տարբեր տարածությունների մի ամբողջ շարք⁶:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 196:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 197:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 199:

Այդ տարածությունները տարբեր են թե՛ հարաբերությունների, թե՛ բովանդակության և թե՛ ձևի տեսանկյուններից: Հետերոտոպիաները, որքան էլ հակասական թվա, ներառում են այնպիսի վայրեր, ինչպիսիք են մասնավորը և հանրայինը, ընտանեկանը և սոցիալականը, մշակութայինը և կիրառականը, հանգստինը և աշխատանքայինը⁷:

Հետերոտոպային տարածության հատկանիշներից մեկն էլ ժամանակի տարբեր շրջանների հետ նրա կապն է, ինչի հետևանքով մարդու և նրա ավանդական ժամանակի միջև կապը խզվում է: Ընդհանուր առմամբ այնպիսի հասարակություններում, ինչպիսին, օրինակ, հայկական իրականությունն է, հետերոտոպիաներն ունեն համեմատաբար բարդ կառուցվածք և համակարգվածություն: Նախ և առաջ կան հետերոտոպիաներ, որոնք ստեղծված են ժամանակի անվերջ կուտակման համար, օրինակ՝ թանգարանները, գրադարանները, արխիվները, տարատեսակ պահոցները: Դրանցում ժամանակը երբեք կանգ չի առնում: Դրանց հիմքում ընկած է ամեն ինչ՝ բոլոր դարաշրջանները, բոլոր ձևերը, ճաշակները, գաղափարները հավաքելու, մի տեղում միաձուլող ինքնատիպ «գլխավոր արխիվ» ստեղծելու գաղափարը: Այդ տարածություններն արդեն իսկ ժամանակից դուրս են: Մեր օրերում ստեղծվում են տարբեր տեսակի ժամանակային հետերոտոպիաներ, օրինակ՝ քաղաքից դուրս կազմակերպվում են թեմատիկ ճամբարներ, գյուղեր, որտեղ առաջարկվում է ապրել այս կամ այն դարաշրջանի միջավայրում և այլն⁸:

Հետերոտոպիաներն ունեն մուտքի և ելքի համակարգեր, որոնք մի կողմից առանձնացնում են դրանք արտաքին տարածությունից, մյուս կողմից ներթափանցման հնարավորություն են տալիս: Այլ խոսքով՝ հետերոտոպիա մտնելն այնքան հեշտ չէ, որքան սոցիալական մյուս տարածություններ: Երբեմն այնտեղ մտնում են առանց սեփական կամքի, պարտադրված (բանտեր), երբեմն անհատը պետք է անցնի հատուկ ծիսակարգերի միջով, որպեսզի մաքրվի և ինչ-որ կերպ նախապատրաստվի հետերոտոպիա մտնելուն:

Գոյություն ունի հետերոտոպիայի մեկ այլ տարատեսակ, որը մուտքի և ելքի տեսանկյունից բավականին հասանելի է: Այն մնացյալ տարածությունների նկատմամբ կատարում է մի այնպիսի գործառույթ, որն իրականացվում է երկու ծայրահեղությունների միջև: Կամ այլ կերպ ասած՝ հետերոտոպիան ստեղծում է թվացյալ տարածություն, որը բացառում է առօրեական տարածությունը, սովորականը, ընդունվածը և թույլատրում է «անընդունելին», ոչ սովորականը:

Հետերոտոպային տարածությունների բոլոր տեսակներն ամենաուղիղ ձևով ազդում են մարդու վարքագծի վրա: Վարքը և տարածութ-

⁷ Տե՛ս **Баева Л. В.** Феномены электронной культуры как гетеротопные пространства // *Философия и культура*, 2015, № 11, էջ 1620. DOI: 10.7256/1999-2793.2015.11.15928:

⁸ Տե՛ս **Фуко М.**, նշվ. աշխ., էջ 201:

յունը փոխկապված են: Մարդու վարքագիծը, գործունեությունն անընդհատ կանոնակարգվում են հետերոտոպային տարածությունում:

Թեև Ֆուկոն չէր ենթադրում, որ իր հետերոտոպիաների տեսությունը կարող է կիրառվել սոցիոմշակութային այլ երևույթների նկարագրման և վերլուծության համար, այնուհանդերձ նրա ներկայացրած տիպաբանությունը բավականին արդյունավետ է ֆրոնտիրի (ինչպես նաև վիթտուալ տարածությունների) վերլուծության դեպքում: Ֆրոնտիրը կարելի է դիտարկել որպես մի յուրահատուկ հետերոտոպիա, որպես տվյալ մշակույթի սահմաններից այն կողմ կամ մշակույթի սահմանների վրա գտնվող տարածություն: Հետերոտոպային տարածությունների օրենքներն ու կանոնները գործում են ֆրոնտիրում՝ փոխելով այդտեղ իրականության ընկալումը և հանգեցնելով նոր իրականությունների ստեղծման: Կարելի է ասել, որ ֆրոնտիրային հետերոտոպիան առօրեական տարածության հակադրությունն է: Առօրեականն այն վայրն է, որտեղ ժամանակն ընթանում է հաստատուն և դանդաղ, և որի հետևանքով դրա մասին ոչինչ պատմել չի լինի⁹: Գործառութային տեսանկյունից «առօրեականություն» նշանակում է մարդկային ցանկացած գործունեության սովորականացում, ռիթմականացում, ծիսականացում, մեքենայացում և այլն: Կարելի է առանձնացնել պոետի, ինժեների, ճանապարհորդի, գիտնականի, արհեստավորի առօրեականություն: Այն մի միջավայր է, որտեղ մարդու գիտակցական ընտրության շրջանակները քիչ են, գոյություն ունեն խնդիրների լուծման պատրաստի միջոցներ և ձևեր: Այս տեսանկյունից «առօրեականությունը յուրահատուկ կող է, որն առաջ է գալիս անհատի գիտակցությունում այս կամ այն պրակտիկ խնդիրը լուծելու անհրաժեշտության ժամանակ, դա «ինչպե՞ս» հարցի պատասխանների տարածությունն է¹⁰: Առօրեականության տարածության մեջ են մտնում սովորականը, հասկանալին, որոշակին, հարագատր, յուրայինը: Այն շրջանակվում է որոշակի մշակութային սահմաններով: Իսկ առօրեականության սահմաններից այն կողմ են անսովորը, անորոշը, վտանգավորը, օտարը և այլն: Կամա թե ականա հայտնվելով այնտեղ՝ մարդը հաճախ չի կարողանում ծագած խնդիրները լուծել առօրեականության կողով կամ տարբերակներով և ստիպված է լինում դուրս գալ առօրեականության իր սահմաններից:

Ֆրոնտիրային հետերոտոպիան գերծ է առօրեականությունից: Օրենքները, որոնք գործում են այդ տարածությունում, լրջագույնս փոխում են իրականության ավանդական ընկալումը՝ հանգեցնելով նոր իրականությունների ստեղծմանը: Նոր մարդկանց հետ հանդիպումը վերածվում է սովորականի շրջանակից դուրս գալու, նրանց ընկալելու

⁹ Տե՛ս **Куликов Д.** Повседневное и необычное: границы и горизонты // Известия вузов. Серия «Гуманитарные науки», Иваново, 2013, № 4 (1), էջ 68:

¹⁰ **Сыров Н.** О статусе и структуре повседневности // Личность. Культура. Общество, Ижевск, 2000, т. 2, с. 158.

նոր միջոցների կառուցման գործընթացի: Անձանոթ մշակույթները, ռասսաները, լեզուներն ընկալվում են որպես ֆանտաստիկ, գերբնական կամ հրեշավոր և թշնամական երևույթներ:

Ֆրոնտիրային հետերոտոպիաները, նույնիսկ այնպիսիները, որոնցում միջմշակութային երկխոսությունը կայանում է և ձեռք է բերում իր ամենագարգացած ձևերը, որպես կանոն հանդես են գալիս իբրև մի ինչ-որ սինթեզավորված, բազմամշակութային միջավայր, որում կարելի է գտնել հին և նոր բազմաթիվ բաղադրիչներ: Ֆրոնտիրն այն է, ինչը գտնվում է սահմանից այն կողմ: Դա այն գծի հատումն է, որի դեպքում մարդը չգիտի, թե ինչ է լինելու, և ինչ է սպասվում իրեն: Դա սոցիալական սովորական դրվածքների սահմանին կամ սահմանից այն կողմ գոյություն ունեցող կյանքն է: Այն չունի «սահմաններ», և քանի որ «սահմանինը» և «սահմանից այն կողմը» նույնը չեն, կյանքն այս տարածություններում արմատապես տարբեր որակներ է ստանում:

Տեղեկատվական, միգրացիոն և քաղաքական գլոբալ գործընթացների ազդեցությամբ տեղի ունեցող միջմշակութային փոխազդեցություններն ու բախումները հանգեցրին հետերոտոպային տեսակի նոր մարդու առաջացմանը: Դա այնպիսի սուբյեկտ է, որը, դուրս գալով իր համար սովորական դարձած աշխարհի սահմաններից, ստիպված է հարմարվել թե՛ բնական, թե՛ մշակութային նոր պայմաններին: Այս ամենը ստիպում է նրան հրաժարվել սովորական և հարազատ մշակութային միջավայրից և ոչ թե ուղղակի տարրալուծվել նոր միջավայրում, այլ ստեղծել նոր մշակույթ, որը, ըստ նրա, առավել համապատասխան է նոր միջավայրին: Այսպիսով, ֆրոնտիրում ձևավորվում են նոր մշակույթներ, իսկ հները ենթարկվում են լուրջ փոփոխությունների: Ֆրոնտիրային սուբյեկտները փոխում են ոչ միայն բնական լանդշաֆտը, այլև մշակութայինը: Այդ գործընթացում դերակատարներն իրենք էլ փոխվում են. այստեղ առաջ է գալիս բազմամշակութային մարդը: Նրա համար ավանդույթները դադարում են լինել անցյալում խիստ ամրագրված դիրքորոշումների, արժեքների և կարծրատիպերի պասիվ ընկալման հիմք. դրանք դառնում են բազմազան, տեղեկատվական տարածության պլուրալիստական բաղադրիչներ: Եվ դրանց բազմազանությունը թույլ է տալիս մարդուն առնչվել «դերերի», «ձևերի», «իմաստների» անվերջանալի հոսքին¹¹: Նրա ինքնության հիմքում ընկած են տեսակետների շարժունությունը, փոփոխություններին պատրաստակամությունը, ինչը թույլ է տալիս ընդունել իրականության բոլոր տեսակի ձևափոխություններն ու նորացումները: Այս իմաստով բազմամշակութային մարդու ինքնությունը տարբերվում է ավանդական հասարակությունների մարդու ինքնությունից: Նա իր մշակույթի անբաժանելի մասը չէ,

¹¹ Տե՛ս **Бауман З.** Прощание с миром своих и чужих // «Вокруг Света», 2011, № 12, էջ 31-32:

բայց նաև վտարանդի չէ. նա սահմանային մարդ է¹²: Նրա կյանքի ոճը ինքնության քանդման, վերաձևավորման և բարեփոխման անընդհատ գործընթաց է՝ համապատասխան իրավիճակի փոփոխություններին: Նրա յուրաքանչյուր նոր ինքնության աղբյուր է դառնում նախորդ ինքնության ճգնաժամը կամ նույնականացման անկումը:

Նրանք փոխում են նաև մշակութային այդ երկխոսության մյուս կողմին: Եվ որքան երկար է նա լինում ֆրոնտիերում, այնքան շատ է նրա ինքնությունը ենթարկվում վերաձևավորումների՝ դառնալով «դինամիկ սուբյեկտ»: Մա արտահայտում է սուբյեկտի շարժունությունը, անընդհատ շարժվելու նրա վիճակը: Առօրյա կեցության սահմաններից նրա դուրս գալը նրան անխուսափելիորեն տանում է նոր իրականություն՝ ստիպելով գործել նոր, երբեմն էքստրեմալ կամ էքստրաօրդինար պայմաններում:

Սահմանից դուրս գալու, մշակույթի «ճակատագրական գիծը» հատելու այդ «տրանս» վիճակն ի վերջո հանգեցնում է մարդու տրանսգրեսիայի: Այս հասկացությունն արդեն վաղուց շրջանառվում է փիլիսոփայական տարբեր բանավեճերում՝ հատկապես կրոնի և սեռականության հարցերում: Մակայն այն արտահայտում է նաև հետերոտոպային տարածություններում, այդ թվում ֆրոնտիերում մարդու վարքային առանձին օրինակների էությունը: Տրանսգրեսիան արտահայտում է անանցանելի սահմանի, առաջին հերթին՝ «հնարավորի» և «անհնարի» սահմանների խախտումը, սահմանազանցումը: Հայտնվելով ֆրոնտիերում՝ մարդը տրանսգրեսիվ վարքով կատարում է սահմանազանցում. «անցնում է իր սահմանները», նախկինում անխախտ համարվող սահմանները ոտնահարում ու հաղթահարում է: Այլ կերպ ասած՝ իր վարքագծի «չի կարելիները» հաղթահարում է և նոր ֆրոնտիերային հետերոտոպիկ տարածությունում վերաարժևորում և վերաձևակերպում է սոցիալական ու մշակութային դիրքորոշումները: Տրանսգրեսիայի ժամանակ մարդը փորձում է նմանվել, նմանակել օտարին, յուրացնել օտար մշակույթի տարրերը: Մակայն արդյունքում տեղի է ունենում ոչ թե պարզապես ուժացում, այլև օտար մշակույթի այդ տարրերը ենթարկվում են յուրովի մեկնաբանության ու ընկալման և ըստ այդմ՝ փոխակերպված իրացման: Այստեղ հենց ստեղծվում է նոր մշակույթ, որը բովանդակում է տարբեր մշակույթների բազմապիսի համադրություններ: Այդպիսով, սահմանից այն կողմ այդ ֆրոնտիերային իրականությունը մարդու համար դառնում է շարժիչ ուժ, նոր գործողությունների աղբյուր, որը հանգեցնում է նոր ձևափոխությունների: Բայց նրա՝ նոր ձևերի ձեռքբերումը ոչ թե սեփական մշակույթին ի սկզբանե հատուկ բնական գործոնների զարգացման, այլ օտարին, օտար տարածությանն

¹² Sté u **Орлова О.** Культурная идентичность в процессе модернизации и развития поликультурализма// Межкультурная коммуникация: современная теория и практика (Материалы VII Конвента РАМИ, сентябрь 2012). М., «Аспект Пресс», 2013, էջ 60:

առնչվելու արդյունք է:

Բանալի բառեր – *ֆրոնտիթ, հետերոտոպիա, մշակույթ, օտար, սահման, սահմանազանցում*

КАЗАР АВETИСЯН – *Незнакомое пространство (фронтит) как среда преодоления культурных границ.* – Выход человека за пределы собственного культурного пространства породил особую проблему встречи с Чужим в фронтитной гетеротопии, где формирование его образа происходило в условиях кросс-культурного диалога. Именно фронтит сформировал особую картину мира, в которой Чужому отводилось центральное место. Рассмотрение фронтитра через призму фукоуианского гетеротопного пространства, т.е. пространства, включающего множество других, позволяет проводить анализ с учётом множества акторов культурного диалога, т.к. фронтит – поликультурная среда, включающая в себя различные социокультурные компоненты. Более того, как гетеротопное пространство фронтитная гетеротопия включает в себя все остальные гетеротопии: кризисную, экстремальную, открытую, закрытую и т.д. Проникая на фронтитную территорию, субъект становится частью новой гетеротопии и, соприкасаясь здесь с Чужим, стремится вытеснить его из этого пространства, заменить собой. Но это новое пространство воспринимается неотделимо от Чужого, которое оказывается своеобразным его атрибутом. Именно это стремление заполнить собой пространство и выступает главным мотивом трансгрессии. В итоге формируются новые гибридные культурные пространства.

Ключевые слова: *фронтит, гетеротопия, культура, чужой, граница, трансгрессия*

GHАЗAR AVETISYAN – *Unknown Space (Frontier) as an Environment for Overcoming Cultural Boundaries.* – A person's going beyond the boundaries of his own cultural space gave rise to a particular problem of meeting with an Alien in frontier heterotopy, where the formation of his image took place in the special conditions of cross-cultural dialogue. It was the frontier who formed a special picture of the world, in which the Alien was given a central place. Consideration of the frontier through the prism of a Foucault heterotopic space, i.e. space, including many others, allows you to analyze taking into account the many actors of cultural dialogue, because frontier - a multicultural environment that includes many sociocultural components. Moreover, as a heterotopic space, frontier heterotopy includes all other heterotopies: crisis, extreme, open, closed, etc. Penetrating into the frontier territory, the subject becomes part of a new heterotopy and, in contact with the Alien here, seeks to displace him from this space, to replace him with himself. But this new space is perceived inseparably from the Alien, which turns out to be its peculiar attribute. It is this desire to fill a space with itself that acts as the main motive for transgression. As a result, new hybrid cultural spaces are being formed.

Key words: *frontier, heterotopy, culture, alien, boundary, breaking borders, transgression*

Ներկայացվել է՝ 13.01.2020

Գրախոսվել է՝ 06.02.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020